ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 28-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 18 հունվարի 2022 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ռ. Սարգսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2021 թվականի մայիսի 28-ին ստորագրված՝ «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների բնակչության զբաղվածությանն աջակցելու ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2021 թվականի հոկտեմբերի 14-ի N 1677-Ա որոշմամբ հավանություն է տվել 2021 թվականի մայիսի 28-ին ստորագրված՝ «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների բնակչության զբաղվածությանն աջակցելու ոլորտում համագործակցության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2021 թվականի հոկտեմբերի 21-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների բնակչության զբաղվածությանն աջակցելու ոլորտում համագործակցության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2021 թվականի մայիսի 28-ին Մինսկ քաղաքում՝ աշխատանքի ընդհանուր շուկա ձևավորելիս խնդիրների լուծման ու արգելքների վերացման՝ համաձայնեցված մոտեցումների մշակման, Կողմերի կողմից աշխատաշուկաներում իրականացվող և Համաձայնագրի մասնակից պետություններում բնակչության զբաղվածությանն աջակցելուն ու գործազրկության մակարդակի նվազեցմանն ուղղված միջոցների, ծրագրերի և ծառայությունների մշակման ու արդյունավետության բարձրացման ժամանակ համագործակցության ու փոխօգնության, ինչպես նաև ԱՊՀ մասնակից պետությունների քաղաքացիների՝ ազատ տեղաշարժման և աշխատանքային գործունեության իրականացման իրավունքների ապահովման նպատակով (Հոդվ.1):

2. Համաձայնագրով կարգավորվում են զբաղվածության բնագավառում ԱՊՀ մասնակից պետությունների քաղաքացիների իրավունքներին առնչվող հարաբերությունները: Համաձայնագիրը մշակվել է ԱՊՀ մասնակից պետությունների բնակչության աշխատանքի, զբաղվածության և սոցիալական պաշտպանության խորհրդակցական խորհրդի կողմից՝ համաձայն ԱՊՀ տնտեսական խորհրդի 2017 թվականի մարտի 17-ի «ԱՊՀ մասնակից պետությունների ընդհանուր աշխատաշուկայի փուլային ձևավորման և աշխատուժի միգրացիայի կանոնակարգման հայեցակարգի մասին» որոշմամբ հաստատված «Ընդհանուր աշխատաշուկայի փուլային ձևավորման և աշխատուժի միգրացիայի կանոնակարգման 2017-2020 թթ. գերակա միջոցառումների ծրագրի»:

3. Համաձայնագրի շրջանակներում Կողմերը համագործակցում են աշխատանքի ընդհանուր շուկայի ձևավորման համար պայմանների ստեղծման, բնակչության զբաղվածությանն աջակցելու հարցերով լիազորված կազմակերպությունների ու մարմինների կողմից իրականացվող՝ բնակչության զբաղվածության խնդիրների լուծմանն ու աշխատանքային միգրացիայի կարգավորմանն ուղղված միջոցների, ծրագրերի և ծառայությունների արդյունավետության բարձրացման, հաղորդակցական արգելքների վերացման, այդ թվում՝ ԱՊՀ մասնակից պետությունների աշխատավոր միգրանտներին աշխատանքի տեղավորման պետության լեզվի, պատմության, մշակույթի և իրավունքի հիմունքների ու առանձնահատկությունների ուսուցման ծրագրեր մշակելու միջոցով, ինչպես նաև միջազգային, այդ թվում՝ «Ուորլդսքիլլս» (WorldSkills) ստանդարտներով գործնական կողմնորոշմամբ կարճատև ուսուցման ծրագրերի մշակման և իրականացման, միջազգային, այդ թվում՝ «Ուորլդսքիլլս» մեթոդիկաներով իրավասության անկախ գնահատման արդյունքներով իրավասությունների փոխադարձ ճանաչման համակարգի ստեղծման, աշխատանքի հրդման հետ կապված դժվարություններ ունեցող բնակչության առանձին խմբերին, այդ թվում՝ երիտասարդներին, սահմանափակ հնարավորությունները

ներով անձանց, կանանց, նախակենսաթոշակային տարիքի անձանց, ազատազրկման վայրերից ազատված անձանց աշխատանքի տեղավորման համար հնարավորությունների ընդլայնման, աշխատանքային ռեսուրսների շարժունության բարձրացման, տեղեկատվական համակարգերի զարգացման և ինտեգրման, ոչ ֆորմալ զբաղվածության նվազեցման, և ԱՊՀ մասնակից պետությունների տարածքներում ժամանակավոր աշխատանքային գործունեություն իրականացնելու համար ԱՊՀ մասնակից պետություններից աշխատավոր միգրանտների կազմակերպված հավաքագրման ու ներգրավման համակարգի զարգացման և ներդնման ու անօրինական, այդ թվում՝ աշխատավոր միգրանտների կողմից իրականացվող աշխատանքային գործունեությանը հակազդեցության ուղղություններով (Հոդվ. 4):

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները՝

4.1. Համաձայնագրի շրջանակներում փոխգործակցության ժամանակ առաջնորդվել մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները հարգելու, դրանք պահպանելու և պաշտպանելու, օրինականության, հավասարության, վստահության, օբյեկտիվության, անկախության և հրապարակայնության սկզբունքներով, ինչպես նաև Կողմերի՝ բնակչության զբաղվածությանն աջակցելու հարցերով լիազորված կազմակերպությունների և մարմինների գործողությունների համակարգման, համաձայնեցվածության ու պլանայնության սկզբունքներով (Հոդվ. 3),

4.2. Կողմերի հետ համագործակցել Համաձայնագրով շարադրված հիմնական ձևերով՝ մասնավորապես, Համաձայնագրի առարկային վերաբերող հարցերով փոխադարձ խորհրդատվությունների անցկացմամբ և տեղեկատվության փոխադարձ փոխանակմամբ, Համաձայնագրի առարկային վերաբերող հարցերով խորհրդակցությունների, համաժողովների և այլ համատեղ միջոցառումների պլանավորմամբ և անցկացմամբ, Համաձայնագրի շրջանակներում

Կողմերի փոխգործակցության արդյունավետությունն ու զարգացումն ապահովող Հայաստանի Հանրապետության տեղեկատվական համակարգերի, այդ թվում՝ ԱՊՀ մասնակից պետությունների քաղաքացիների աշխատանքի տեղավորմանը և զբաղվածությանն աջակցելու հարցերով տեղեկատվական պորտալների ստեղծմամբ և զարգացմամբ, Կողմերի կողմից ստեղծվող աշխատանքային խմբերին (հանձնաժողովներին) մասնակցությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ ձևերով, այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ (Հոդվ. 5, պարբերություն 1),

4.3. Համաձայնագիրն իրականացնելիս պահպանել գործնական շփումները և ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ Կողմերի փոխգործակցության արդյունավետությունն ու զարգացումն ապահովելու համար (Հոդվ. 5, պարբերություն 3),

4.4. Համաձայնագրի շրջանակներում տեղեկատվության փոխանակումը և փոխանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ ձեռնարկելով բոլոր անհրաժեշտ միջոցները օրենքով պահպանվող գաղտնիքը պաշտպանելու համար (պետական, ծառայողական, առևտրային և այլն), որը Հայաստանի Հանրապետությանը հայտնի է դարձել իր լիազորությունները կատարելիս, իսկ Համաձայնագրի դրույթների իրականացման հարցերի վերաբերյալ նամակագրությունը կատարել ռուսերենով (Հոդվ. 6),

4.5. ապահովել, որ Համաձայնագրի իրականացմանն ուղղված միջոցառումների ֆինանսական ապահովումը Հայաստանի Հանրապետության լիազորված մարմինների կողմից իրականացվի սեփական միջոցների և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներգրավվող միջոցների հաշվին (Հոդվ. 7) և այլն:

5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով բնակչության զբաղվածությանն աջակցելու ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանա-

դրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2021 թվականի մայիսի 28-ին ստորագրված՝ «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների բնակչության զբաղվածությանն աջակցելու ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

18 հունվարի 2022 թվականի
ՍԴՈ-1622